



**«20» հոկտեմբերի 2020թ.
SSE-201020-01**

Ներկայացնում ենք Ձեզ Սոցիալական Ձեռներեցների (ՍՁ) դպրոցի կողմից կազմակերպվող դասընթացի, ինչպես նաև դպրոցի մասին մանրամասն տեղեկատվություն:

Հատուկ երկամսյա «Արցախի շենացումը սկսվում է Քո համայնքից» Ձեռնարկատիրական, սոցիալական ձեռնարկատիրական դասընթացի արդյունքում մասնակիցները կստանան`

- Networking-ի լայն հարթակ, Նոր ՍՁ բիզնես գաղափարների գեներացում,
- Լավագույն գաղափարի ֆինանսավորում,
- հնարավորություն ուսումնասիրել ԱՀ սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնախնդիրների լուծման, համայնքների զարգացման, առաջխաղացման մի շարք նորարարական և պրակտիկ մեխանիզմներ և մեթոդներ,
- Համապարփակ գիտելիքներ ռազմական դրության պայմաններում և այլ ճգնաժամային իրավիճակներում ինչպես համակարգել, ներգրավվել Ձեր և Ձեր համայնքի իրացվող և չիրացվող ռեսուրսները ձեռնարկատիրական գործընթացում,
- Ինչպես ապահովել Արցախում դրական փոփոխություններ` համակարգելով ԱՀ-ի զարգացման և կառուցման գաղափարներով համակված անձանց,
- ՍՁ գաղափարի ձևակերպումից մինչև բիզնես ծրագրի, բիզնես պլանի կազմման և իրականացման փուլերով անցնելու հնարավորություն,
- Խորհրդատվություն և գիտելիքի Ոլորտի առաջատար փորձագետներից և մենթորներից:

ՍՁ կրթական ծրագրի հիմնական բաժիններ են`

- ՍՁ գաղափարների գեներացում ,
- Բիզնես գաղափարի մոդելավորում, թեստավորում և վավերացում,
- ՍՁ բիզնես կտավ մոդելի կազմում,
- ՍՁ ֆինասական պլանավորում և կառավարում,
- Սոցիալական և ժգնաժամերի կառավարում,
- ՍՁ մարքեթինգ և մարքեթինգային ռազմավարության մշակում ,



Սոցիալական Ձեռներեցների դպրոց School of Social Entrepreneurs

- ՍՁ PR և հաղորդակցության ապահովում,
- Վաճառքի կազմակերպում,
- Ճգնաժամային փոփոխությունների կառավարում պատերազմական և այլ իրավիճակներում,
- Սոցիալական ազդեցության և ռիսկերի գնահատում, գործիքների տրամադրում,
- Չոր բիզնեսում կիրառվող մեխանիզմների և մարտավարությունների ուսումնասիրում,
- Դրամաշնորհային ծրագրերի առաջարկի մշակում և աղբյուրների մասին տեղեկատվության տրամադրում,
- Մարքեթինգային ռազմավարության կազման, իվենթ մարքեթինգի, թվային մարքեթինգի հմտություններ,
- Agile ծրագրի մշակում և կառավարում,
- Հարկային, իրավաբանական, հաշվապահական խորհրդատվության տրամադրում,
- Բիզնես ռազմավարության մշակում,
- Բրենդի առաջխաղացում և 4 գործիքների տրամադրում,
- Հաջողակ ՍՁ և ավանդական գործարարների հետ հանդիպում-քննարկումների կազմակերպում, փորձի փոխանակում:

(Սոցիալական ձեռնարկատիրական **#Կրթություն**ն ավելի դյուրին և արդյունավետ դարձնելու համար մշակվել է՝ **ՍՁ** առաջխաղացման **16** կենսունակ մոդուլներ, **Workshop**-եր, **6** պրակտիկ մեթոդներ, **5** գործիքներ)

ՍՁ դասընթացը ներառում է շաբաթական 2 տեսական և 1 պրակտիկ դաս, ինչպես նաև լավագույն գաղափարի ֆինանսավորում:

- Ընդունելությունը կատարվում է բանավոր հարցազրույցի անցկացման միջոցով (հայտի լրացումը պարտադիր է),
- Բոլոր դասընթացներին մասնակցած մասնակիցներին կտրվի հավաստագիր,
- Մասնակցությունը միայն ԱՀ անձնագրերով :

Գրանցման համար անցեք հետևյալ հղումով՝ <https://bit.ly/2khAdrn>
Հայտերի ընդունման վերջնաժամկետը ս/թ հոկտեմբերի 29-ն է:



Սոցիալական ձեռներեցների դպրոց School of Social Entrepreneurs

Սոցիալական ձեռներեցների դպրոցը գործում է շուրջ 2.5 տարի, որի ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ փակ և բաց ձևաչափով դասընթացներ, որին մասնակցել են 1000 ավել շՀ և ԱՀ քաղաքացիներ: 2018 թվականից մինչ օրս Սոցիալական ձեռներեցների դպրոց ընդունվել է 96 հոգի, սակայն ավարտել է 85, որից 17-ը հիմնել են սոցիալական ձեռնարկատիրություն, 5-ը՝ ավանդական ձեռնարկատիրություն:

Դպրոցի առաքելությունն է՝ փոխանցելով ՍՁ գիտելիքներ և հիմնելով սոցիալական բիզնես և օգտագործելով սեփական պոտենցիալը՝ ունենալ զարգացած հայ գյուղական, քաղաքային համայնքներ և բարեկեցիկ հասարակություն:

Կարևոր նպատակներից մեկն է՝ տրամադրել համապարփակ ՍՁ գիտելիքներ և զարգացնել ՍՁ-ն Հայաստանում՝ չիրացվող ռեսուրսների բացահայտման, համակարգման, կառավարման և կորորդինացման միջոցով, ինչպես նաև ստեղծել միասնական հարթակ՝ Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության հետ կապված խնդիրների ու զարգացման հնարավորությունների խթանման ու տարածման համար: Նպատակներից է նաև՝ ակտիվացնել երիտասարդների, գյուղաբնակների և կանանց տնտեսական դերը Հայաստանում և նրանց կարողությունների և ներուժի զարգացմամբ նպաստել հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ վերջնանպատակում հասնելով սոցիալական դրական փոփոխությունների և աղքատության կրճատման:

ՍՁ դպրոցում դասավանդում են իրենց գործի գիտակ մասնագետներ՝ պետական այրեր, մարզային և համայնքային կառավարման կառույցների ներկայացուցիչներ, միջազգային և տեղական ՍՁ ոլորտի առաջատար փորձագետներ և մենթորներ, վաճառքի, մարքեթինգի և PR ոլորտների մասնագետներ, միջազգային բիզնես փորձագետներ և քուլչներ: Մի շարք երկրների միջազգային կազմակերպությունների հրավիրված ներկայացուցիչներ էլեկտրոնային վեբինար հարթակի միջոցով պարբերաբար քննարկումներ են ունենում ՍՁ դպրոցի գործընկերների հետ և ներկայացնելու են տարբեր երկրների ՍՁ փորձը:

Հարգանքներով՝

Սոցիալական ձեռներեցների

առաջին դպրոցի հիմնադիր

Գոհար Մկոյան

+374 98 005 51

• Էլ փոստ՝ ssearmenia@gmail.com / Հեռ՝ +374 98005513 •

Հայաստան, Երևան, Էլիտ պլազա բիզնես կենտրոն, 0010, 15 Մովսես Խորենացի փողոց

• e-mail: ssearmenia@gmail.com / Tel: +374 98005513 •

Elite Plaza Business Center, 15 Movses Khorenatsi Street, Yerevan, Republic of Armenia